ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2023 թվականի նոյեմբերի 30-ի, ժամը 14:00-ի նիստի
N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Մանուկ Էդվարդի Մովսիսյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը («Առավոտ» օրաթերթ, 10.10.2023, N 175 (6947)):

Զեկուցողներ՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Դ.Ռ.Գալոյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ա.Ա.Մկրտչյան**:

Զեկուցողները նշեցին. «Առավոտ» օրաթերթի 2023 թվականի հոկտեմբերի 10-ի N 175 (6947)) համարում **հայտարարվել է մրցույթ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար**, որին կարող են մասնակցել տնտեսագիտության դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք, որոնք ունեն առնվազն 10 տարվա բուհական գիտամանկավարժական աշխատանքի ստաժ: Կառավարման ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2023 թվականի նոյեմբերի 1-ին ռեկտորին դիմում է ներկայացրել կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Մանուկ Էդվարդի Մովսիսյանը**: Ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դեկանի ընտրության ընթացակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Դոցենտ Ա.Ա.Մկրտչյանը նշեց. Մ.Է.Մովսիսյանը ծնվել է 1976 թվականի հունվարի 7-ին Արագածոտնի մարզի (նախկինում՝ Թալինի

շրջան) Թալին քաղաքում: 1983-1993 թթ. սովորել և ավարտել է Թալինի թիվ 2 միջնակարգ դպրոցը: 1993-1998 թթ. սովորել և գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտի (այժմ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան) ֆինանսահաշվային ֆակուլտետի լրիվ դասընթացը «Ֆինանսներ և վարկ» մասնագիտությամբ՝ ստանալով տնտեսագետի որակավորում: 1998 թվականին ընդունվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ասպիրանտուրա:

2002 թվականին Մ.Է.Մովսիսյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն Ը.00.05՝ «Հաշվապահական հաշվառում և վիճակագրություն» մասնագիտությամբ և ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2009 թվականին ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ: Մ.Է.Մովսիսյանը ունի տվյալ բնագավառում հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ. վերջին 5 տարում հրատարակել է 1 ուսումնական ձեռնարկ (համահեղինակությամբ), 3 մենագրություն (համահեղինակությամբ) և 10 գիտական հոդված:

Աշխատանքային գործունեությունը: Մ.Է.Մովսիսյանը 01.09.1998 - 20.06.2001 աշխատել է «Աուդիտ ԱՍ» ՍՊԸ-ում որպես աուդիտոր, 25.06.2001 - 11.04.2003՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունում. նախ՝ 25.06.2001 - 28.02.2022՝ մակրոտնտեսական ցուցանիշների վիճակագրության վարչության ֆինանսների և դրամաշրջանառության բաժնի առաջին կարգի մասնագետ, 28.02.2022 - 27.08.2002՝ ֆինանսների և դրամաշրջանառության բաժնի պետ, այնուհետև՝ 28.08.2022 - 04.11.2003՝ ֆինանսների վիճակագրության բաժնի պետ: 01.11.2003 - 25.06.2004՝ արտաքին համատեղությամբ աշխատել է «Մաքս Քոնսալթինգ» ՍՊԸ-ում որպես գլխավոր հաշվապահ, այնուհետև՝ ֆինանսական տնօրեն: 05.05.2011 -12.09.2011 արտաքին համատեղությամբ աշխատել է «Ռեգիոն» ֆինանսական արդյունաբերական կորպորատիվ ՓԲԸ-ում որպես աուդիտոր: 2003 թվականի ապրիլի 11-ից Մ.Է.Մովսիսյանը աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի վիճակագրության ամբիոնում. նախ՝ 11.04.2003 - 27.09.2010՝ ասիստենտ, այնուհետև՝ 28.09.2010 - 11.09.2012՝ դոցենտ: 12.09.2012 - 19.11.2013 եղել է ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի տեղակալ, 20.11.2013 - 26.05.2014՝ ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, 27.05.2014 - 01.07.2018՝ ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկան: 09.09.2016 - 04.05.2017 Մ.Է.Մովսիսյանի վրա լրացուցիչ դրված է եղել վիճակագրության ամբիոնի

վարիչի գործառույթները: 02.07.2018 - 22.11.2018 Մ.Է.Մովսիսյանը եղել է կառավարման ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, իսկ 2018 թվականի նոյեմբերի 23-ից կառավարման ֆակուլտետի դեկանն է: Միաժամանակ, որպես դոցենտ, Մ.Է.Մովսիսյանը 2012 թվականի սեպտեմբերի 30-ից առ այսօր համատեղությամբ դասավանդում է վիճակագրության ամբիոնում:

Տիրապետում է անգլերենին (բավարար), ռուսերենին (լավ)

Ամուսնացած է, ունի 2 երեխա: Անկուսակցական է:

Դոցենտ Ա.Ա.Մկրտչյանը նշեց, որ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ֆակուլտետի խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 16-ի նիստում (արձանագրություն N 4) քննարկվել է կառավարման ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Մ.Է.Մովսիսյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դեկանի ընտրության ընթացակարգի» 13-րդ կետի համաձայն ներկայացրած ֆակուլտետի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագրի, հավակնորդի մասնագիտական բնութագրի և դեկանի պաշտոնին հավակնորդի համապատասխանության մասին հարցը: Նիստը նախագահել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը: Նա ներկայացրել է Մ.Է.Մովսիսյանի անցած աշխատանքային ուղին՝ շեշտադրելով, որ զբաղեցնելով կառավարման ֆակուլտետի դեկանի պաշտոնը, նա մշտապես վայելում է ինչպես պրոֆեսորադասախոսական կազմի, այնպես էլ ուսանողության սերն ու հարգանքը, օժտված է մասնագիտական, կառավարչական և մարդկային բարձր որակներով՝ նպաստելով ֆակուլտետի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Այնուհետև Մ.Է.Մովսիսյանը ներկայացրել է կառավարման ֆակուլտետի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը: Անդրադառնալով ֆակուտետի թույլ և ուժեղ կողմերին՝ նա առաջարկել է առկա խնդիրների և թերությունների շտկման որակապես նոր ուղիներ՝ մարտահրավեր նետելով ժամանակի պահանջներին: Մասնավորապես՝ ֆակուլտետում գիտակրթական և ուսումնակազմակերպական գործընթացների որակի մակարդակի շարունակական բարձրացման ապահովման, ինչպես նաև համալսարանի ռազմավարությանը համահունչ առաջադրված զարգացման տեսլականի արդյունավետ իրացման համար նախանշել է քայլերի հաջորդականություն հետևյալ ուղղություններով՝ ուսումնամեթոդական և ուսումնակազմակերպական գործունեություն, գիտահետազոտական գործունեություն, միջազգային գործունեություն, նյութատեխնիկական հենքի ամրապնդում, ուսումնադաստիրակչական գործունեություն: Հավակնորդի

վերաբերյալ դրական կարծիքներով ելույթ են ունեցել ռեկտոր Դ.Ռ.Գալոյանը, պրոֆեսոր Մ.Ս.Մելքումյանը, դոցենտ Ա.Ռ.Կարախանյանը, 3-րդ կուրսի ուսանող Ս.Գ.Մովսիսյանը: Նրանք գոհունակություն են հայտնել Մ.Է.Մովսիսյանի աշխատանքից և միանշանակ կողմ արտահայտվել, որ վերջինս առաջիկա 5 տարիները ևս զբաղեցնի կառավարման ֆակուլտետի դեկանի պաշտոնը: 3-րդ կուրսի ուսանող Ս.Գ.Մովսիսյանը ներկայացրել է նրա իրականացրած առավելապես ուսանողամետ գործունեությունը: Նրանք նշել են նաև, որ դեկանի թափուր պաշտոնի հավակնորդը համապատասխանում է դեկանի պաշտոնին ներկայացվող պահանջներին և առաջարկել են Մ.Է.Մովսիսյանի թեկնածությունը ներկայացնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ կառավարման ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար: Ելույթներից հետո դեկանի պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է ֆակուլտետի խորհրդի նիստի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1) կառավարման ֆակուլտետի խորհուրդը որոշել է, որ հավակնորդը համապատասխանում է դեկանի պաշտոնին և երաշխավորել է Մ.Է.Մովսիսյանի թեկնածությունը ներկայացնել համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ կառավարման ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Հարցը քննարկվել է նաև գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 24-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 21): Բաց քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) որոշվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մանուկ Էդվարդի Մովսիսյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ կառավարման ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Զեկուցողներից հետո Մանուկ Էդվարդի Մովսիսյանը ներկայացրեց կառավարման ֆակուլտետի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը, դոցենտ Ա.Ա.Գրիգորյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ֆակուլտետի գործող դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մանուկ Էդվարդի Մովսիսյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ կառավարման ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. գիտական խորհրդի 60 անդամից նիստին ներկա էին 54-ը. կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դեկանի ընտրության ընթացակարգի» 34-րդ կետը, կառավարման ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 1 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 52, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 2**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մանուկ Էդվարդի Մովսիսյանին**:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2023 թ. նոյեմբերի 30
Երևան